Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 4-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԻՆ

(7 հունիսի 2007 թ.)

Մեծարգո Նախագահ,

Հարգարժան պատգամավորներ և ներկաներ,

Ողջունում և շնորհավորում ենք ձեզ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 4-րդ գումարման անդրանիկ նիստի առիթով:

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ և ի խորոց սրտի հայցով աղոթք վերառաքում առ Աստված. «Յաւել ի մեզ, Տէր Ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր և ամենայն գործս առաքինութեան» (Ժամագիրք): «Ավելացրու մեզանում, Տեր Ամենակալ, հավատը, հույսը, սերը և ամենայն առաքինի գործերը»:

Մեր հայրերի շուրթերին դարերով անձանձիր հնչած աղոթքն է այս, որը զորություն է պարգևել մեր ժողովրդին արարելու ու հարատևելու, և որով ծնունդ են առել մեր հաղթանակներն ու նվաճումները պատմության մեջ: Հավատով, հույսով, սիրով և առաքինի գործերով է վերականգնվել ու կայացել մեր անկախ պետականությունը, և կյանքի են կոչվել բոլոր այն ձեռքբերումները, որոնք մնայուն են լինելու:

Ինքնիշխան պետականության վերահաստատումից ի վեր Ազգային Ժողովը կարևոր նպաստ է բերել պետականաշինության գործին, օրենքներ է մշակել հանուն մեր երկրում որոշիչ վերափոխումների իրականացման, հոգևոր, տնտեսական և ընկերային կյանքի բարեփոխման, կրթության, գիտության ու մշակույթի առաջընթացի: Դուք, մեծարգո պատգամավորներ, կոչված եք օրենսդիր բարձր իշխանությամբ ծառայելու մեր Հայրենիքին ու ժողովրդին այնպիսի ժամանակում, երբ մեր ժողովուրդը ավելի մոտ է տեսնում հզոր ու բարօր Հայրենիքի, ապահով ու երջանիկ կյանքի իր տեսիլքը: Ավելի պակաս ջանքեր ու ավելի պակաս նվիրում չպիտի պահանջվեն այդ ճանապարհին: Հարկ ի վերա ձեր կա՝ արդյունավորությամբ շարունակելու Ազգային Ժողովի առաքելությունը:

Արդ, խնդրենք, որ Տերը մեր Քրիստոս հավելի մեզանում հավատը ճշմարտադավան, հույսը՝ կենարար, և սերը՝ հրաշագործող, բարիք ստեղծելու ու բարին գործելու, մեր պատմության հուսաբեր նոր օրը կերտելու:

Մաղթում ենք ձեզ, սիրելի պատգամավորներ, կորովաշատ ծառայություն և բազմարդյուն գործունեություն, որպեսզի դուք և մեր ողջ ժողովուրդը ուրախանան ձեր ջանքերի առատ պտուղներով:

Թող հանապազորյա Մեր աղոթքով և մեր սուրբ նախնյաց բարեխոսությամբ Տիրոջ ճշմարտության հոգին միշտ առաջնորդ լինի ձեզ: Հաջողություն ձեզ և բարի ընթացք Ազգային Ժողովի աշխատանքներին:

Պահպանիչ և յոյս հաւատացելոց, Քրիստոս Աստուած մեր, պահեա, պահպանեա և օրհնեա զՀանրապետութիւն Հայաստան աշխարհի, զաշխարհասփիւռ ժողովուրդս հայոց, այլև զԽորհրդարանն Հայաստանի Հանրապետութեան և զամենայն պատգամաւորս սորա ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիւդ Քով ի խաղաղութեան, փրկեա յերևելի և աներևոյթ թշնամւոյն: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն: